

ԳՐԱԿԱՆԱԳԵՏԸ ԵՎ ՊԱՏՄԱԲԱՆԸ  
(Ալբերտ Մուշեղյանի ծննդյան 85-ամյակի առթիվ)

Լրացավ բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Հայ հին և միջնադարյան գրականության բաժնի առաջատար գիտաշխատող Ալբերտ Վարազդատի Մուշեղյանի ծննդյան 85-ամյակը:



Ս. Մուշեղյանը ծնվել է 1931 թ. սեպտեմբերի 27-ին Երևանում: 1949 թ. ավարտել է դպրոցը ոսկե մեդալով: 1949–1954 թթ. սովորել ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ռումանագերմանական բաժնում, այնուհետև ավարտել է նույն ֆակուլտետի ասպիրանտուրան՝ ավստրոգերմանական գրականության գծով:

Վեց տարեկանում դժբախտ պատահարի պատճառով կորցնելով տեսողությունը՝ աննկուն կամքով ոչ միայն շարունակել է զբաղվել գիտությամբ, այլև կույրերի հիմնախնդիրներով: Հայաստանում 1956 թ. հիմնել է բրայլյան տպարան՝ կույրերի համար ուռուցիկ տատերով գրքեր տպագրելու համար: Իրականացրել է հայկական բրայլյան առաջին գրքերի՝ Բաֆֆու «Մամվելի», Եղիշե Չարենցի բանաստեղծությունների, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և այլ գրքերի տպագրությունները:

Եղել է Հայաստանի կույրերի միավորման կենտրոնական վարչության նախագահը (1965–1973 թթ.):

1973 թ. ընդունվել է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտ, ապա և 1974 թ. գրականության ինստիտուտ, ուր և աշխատում է մինչ օրս:

Ս. Մուշեղյանը 1980 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Ավետիք Իսահակյանի կյանքի և ստեղծագործության վաղ շրջանը» (1889–1895 թթ.), 1996 թ.՝ «Ե դարի հայ մատենագրության ժանրային խնդիրները» թեմայով դոկտորական ատենախոսությունը:

Հայաստանի գրողների միության (1979 թ.) և Բնական ու հասարակական գիտությունների միջազգային ակադեմիայի (2004 թ.) անդամ է:

Անվանի գրականագետն ու պատմաբանը հեղինակ է շուրջ 100 գրականագիտական և հայագիտական հոդվածների, որոնք վերաբերում են հայ ժողովրդի պատմության ծագումնաբանությանն ու հայ հին գրականության սկզբնավորումից մինչև Ավ. Իսահակյան և Եղիշե Չարենց ընկած շրջանին:

Ա. Մուշեղյանը պարզևատրվել է Գրականության ինստիտուտի Մ. Աբեղյանի անվան արձաթե հուշամեդալով, Հայաստանի գրողների միության «Գրական վաստակի համար» մեդալով, Երևանի պետական համալսարանի Ոսկե մեդալով (2010 թ.), ՀՀ - պաշտպանության նախարարության հուշամեդալով (2016 թ.), ՀՀ գիտության և կրթության նախարարության (2016 թ.) Ոսկե մեդալով, ՀՀ ԳԱԱ պատվոգրով (2010 թ.):

Համալսարանական ուսումնառությունն ավարտելուց հետո նախ թարգմանական գործունեությամբ է զբաղվել, գերմանական գրականությունից թարգմանելով Հայնրիխ Հայնեի «Գերմանիա» և «Ձմեռային հեքիաթ» (պոեմ) ստեղծագործությունները (1959 թ.), ապա դարձյալ Հայնեից՝ «Բանաստեղծություններ և գեղոններ» (1983 թ.): Թարգմանական հաջորդ երկու գրքերը Գյոթեից են՝ «Վայնարյան քնար» (1985 թ.) և «Բանաստեղծություններ» (1993 թ.): Նրա համահեղինակությամբ է թարգմանվել Արմին Թ. Վեգների «Ճանապարհ առանց տունդարձի» (2000 թ.) ստեղծագործությունը:

Գերմաներենի և գերմանական գրականության քաջիմացությունը նրան մեծապես օգնելու էր գիտական առաջին ծավալուն ուսումնասիրությունը՝ «Ավետիք Իսահակյան, վաղ տարիներ. 1875–1898 թթ.» (1983 թ.) գրելիս: Այստեղ Վարպետի ստեղծագործական առաջին շրջանը՝ գեղարվեստական հասունացման ընթացքը գրական առաջին փորձերից դիտարկվում է հայ ժողովրդական բանահյուսության և գերմանական գրականության համատեքստում: Նույն համաբանությամբ ներկայացվում են Իսահակյանի ուսումնառության տարիները Մ. Էջմիածնից մինչև Լայպցիգի համալսարան:

Գիրքը գրված է գիտական խորությամբ և աղբյուրների համակողմանի ընդգրկմամբ, ուր հիշատակված են Վարպետի մինչ այդ անտիպ 30 բանաստեղծություններ ու թարգմանություններ: Միաժամանակ այն գրված է գրական շնչով և գեղեցիկ քնարական լեզվով, ուր ընթերցողը զգում է Արագածի փեշերից ու Շիրակ աշխարհից տարածվող Մանթաշի շունչը և Վայնարյան հանճարի խորաքննին հայացքը: Նշվում է, որ 1875–1898 թթ. ընդգրկող ժամանակահատվածում Իսահակյանի պոեզիայում առկա են գրեթե բազմազան այն բոլոր մոտիվները, որոնք առավել խտացված ձևով ու գեղարվեստականությամբ արտահայտվեցին նրա հետագա ստեղծագործություններում: Իր իսկ բնորոշմամբ «Իսահակյանի պատանեկան բանաստեղծությունները օրգանապես նախապատրաստեցին համաշխարհային ճանաչման հասած նրա քնարերգությունը, այլ խոսքերով՝ այդ մեծ պոեզիայի բանաստեղծական նախանվագը եղան»:

Չնայած բանաստեղծության ձգող ուժին և հմայքին, հաջորդող տարիները եկան հաստատելու, որ Ա. Մուշեղյանի գիտական նախասիրությունների հիմքում, այնուամենայնիվ, ընկած են դասական հայագիտության հարցերը: Այստեղ ևս նրան օգնեց լեզուների քաջիմացությունը՝ թե՛ եվրոպական հայագետների տեսակետներին

ծանոթանալու և իր դիրքորոշումն հայտնելու համար և թե՛ անտիկ գրականության սկզբնաղբյուրների քննությամբ հայոց պատմահոր Մատյանը դիտարկելու հունահռոմեական աշխարհի համատեքստում: Նման մոտեցմամբ է գրված «Մովսես Խորենացու դարը» (2007 թ.) մենագրությունը: Աղբյուրների մանրակրկիտ քննությամբ հերքելով Խորենացու ժամանակը և «Հայոց պատմության» վավերականությունը կասկածի ենթարկողների տեսակետները, վստահաբար կարելի է ասել, որ Մ. Աբեղյանից և Ստ. Մալխասյանցից հետո Ա. Մուշեղյանը երկրորդ անգամ Մովսես Խորենացուն վերահաստատեց այն պատվավոր տեղում, որը նա գրավում է V դարի հայ պատմագրության ժամանակագրական համակարգում:

Խորենացուն մինչև IX դար հասցնողների գլխավոր փաստարկն այն է եղել, որ, իբրև թե, Պատմահոր Մատյանում հիշվում են VI–VIII դարերի իրադարձությունները, ինչպես նաև վկայակոչումներ են կատարվել նույն դարերի հունահռոմեական աղբյուրներից, որով Խորենացու «Հայոց պատմությունը» վերածվում է պատմական անախրոնիզմի: Ա. Մուշեղյանն աղբյուրների մանրակրկիտ որոնմամբ կարողացավ մեկ առ մեկ հերքել նման ժամանակային անհամապատասխանությունները, ցույց տալով, որ դրանք իրենց սկզբնաղբյուրային համարժեքներն ունեն մինչև V դար հասնող սասանյան վիմագիր արձանագրություններում և պահլավական գրական հուշարձաններում, ինչպես նաև ասորական ու հունահռոմեական գրականության մեջ: Նման ելակետով և մեթոդաբանությամբ է հեղինակը քննում Խորենացու ծննդավայրի հետ կապված հարցերը, որոնք ևս գայթակղության քար էին դարձել: Նա հիմնավորված ցույց է տալիս, որ Պատմահայրն ապրել է V դարում և ծնվել Տարոն աշխարհում: Այնուհետև նույն հիմնավորվածությամբ ապացուցում է, որ Չորս Հայքերի Խորենացու մոտ եղած հիշատակությունները չեն վերաբերում հաջորդ դարերում կատարված վերաբաժանումներին և ի մասնավորի Հուստինիանոս կայսրի կատարած ռեֆորմներին: Հետևաբար, Խորենացու մոտ արտահայտված է Հայաստանի մինչև V դարի վերջն ընկած և ոչ թե հաջորդող երկու-երեք դարերի վարչաքաղաքական բաժանման պատկերը:

Խորենացու «Հայոց պատմությունը» քանի որ ստուգաբանվում է V դարի հայ պատմագրության ընդհանուր համատեքստում, ուստի հետազոտությունների հետագա ընթացքը նրան տարավ դարի մյուս պատմիչների երկերի քննությանը: Պատմագրական երկի և այնտեղ նկարագրված պատմական իրադարձությունների փոխկապակցված քննությամբ նախ Խորենացու «Հայոց պատմության» և հայկական թագավորական հարստությունների (դինաստիաների) վերլուծությունը կատարեց: Այնուհետև Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» դիտարկեց Գրիգոր Լուսավորչի անվան շուրջը մինչև 430-ական թվականները հաստատված խորհրդապահական արգելքի և Հայոց Դարձի պատմության շրջանակում: Նման մոտեցմամբ Գորյունի «Վարք Մաշտոցին» վերլուծվեց գրերի գյուտի և Աստվածաշնչի հայերեն թարգմա-

նության հարցերի հետ փոխկապակցված, իսկ Եղիշեի ու Փարպեցու գործը՝ Ավարայրի ճակատամարտի և Վարդանանց շարժման դիտանկյունից:

Հետևաբար, Ա. Մուշեղյանը մեր այն հայագետներից է, ով հավասարապես թե՛ գրականագետ է և թե՛ պատմաբան, շնորհիվ որի նրա ուսումնասիրությունները մեր դասական հայագետների գործերի նման կարող ենք անվանել պատմա-բանասիրական ուսումնասիրություններ:

Մինչև այսօր երկա՛ր-երկա՛ր տարիներ հանդարտ, բայց հաստատուն քայլերով նա բարձրանում է Մատենադարանի բարձունքը, իր անխաբ լսողությամբ անվանապես բարևելով ճանապարհին իրեն ողջունողներին: Միայն ապշել կարելի է, թե զարմանահրաշ իր հիշողությամբ խորաքնին հայացքը ինչպես է նա սահեցնում դարերի վրայով նախաքրիստոնեական շրջանից ու V դարից մինչև XX դարասկզբի հայ դասական գրականությունը:

Ա. Մուշեղյանին մենք կարող ենք անվանել նաև մշտարթուն և անկաշառ հայացքով մի ժամապահ, ով մեր հարևանների ոտնձգություններից շարունակ պաշտպանում է մեր գրականության տիրույթները՝ չափավորելով նրանց անչափելի ախորժակը: Այժմ նրա ղեկավարությամբ Գրականության ինստիտուտում իրականացվում է մի կարևոր աշխատանք՝ Հայոց Արևելյան կողմանց գրականության ադրբեջանական գիտնականների կողմից սեփականացնելու փորձերի դեմ:

Այսօր մենք որքան վստահ ենք նրա որպես ժամապահի դիրքային հերթապահության համար, դժբախտաբար, նույնքան մտահոգ ենք դիրքային հերթափոխի համար, որովհետև մեր հարևաններն իրենց շարունակական գործունեությամբ ապացուցում են, որ իսկույն տեր են դառնում ոչ միայն բաց մնացած պաշտպանական ամեն մի գծի, ամեն մի դիրքի, պաշտպանական հենակետի, այլև պատմամշակութային չպահվող տարածքի:

Նույն այս մտահոգությամբ Ա. Մուշեղյանն իրեն բնորոշ եռանդով իր հարուստ գիտելիքները և հայ պատմագրության ուսումնասիրման փորձն է փոխանցում ինստիտուտի այսօրվա ասպիրանտներին ու հայցողներին, որպեսզի նրանք շարունակեն հայ դասական պատմագրության վավերականության հավաստման, ժամանակի համաշխարհային քաղաքակրթության լայն համապատկերում այն դիտարկելու և գեղարվեստական բարձր արժանիքները վերհանելու դժվարին, բայց և նվիրական գործը:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ,  
ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՄԿԱՆՅԱՆ